Դրոն գործի անցնելուց առաջ, կազմել էր մի ծրագիր, որով առաջարկում էր կարճացնել ռազմաճակատը. գրաւուած վայրերի ժողովուրդը և պաշարից այն մասը, որ հնարաւոր է, տեղափոխել Կովկաս, մնացած պաշարը ոչնչացնել և զօրքերը յետ քաշել ու գրաւել մօտաւորապէս Զիւին—Կարադերբենտ–Գլըչ Գեադուկ—Թափառիդ գիծը, ծայրայեղ դէպքում և Մակուն՝ Ալաշկերտի երկաթուղին պահելու նպատակով: Դրոն համոզուած էր, որ դրանով առաջը կառնի ճակատի զօրամասերի քայքայման և օր աւուր աճող դասալքութեան, իսկ միւս կողմից, կուժեղացնի Կարսը: Բացի այդ, նա առաջարկում էր կազմել մի բրիգադ Դիլիջանի ուղղութեամբ, որպէսզի ապագային, երբ ճակատի գործերը անյաջող գնան, կարելի լինի շարժուել Դանձակի և Ղարաբաղի ուղղութեամբ և միանալով Բաքուին՝ ապահովել հայ ժողովրդի զէթ մարդկային գոյութիւնը:

Այս առաջարկութիւնների շուրջ տեղի ունեցան բուռն վիճաբանութիւններ. դէ՛մ արտայայտուեցին ո՛չ միայն քաղաքացիական գործիչները, այլ և զօր. Նազարբէգեանի ու զօր. Ղորղանեանի պէս զինուորական հեղինակութիւններ, որոնք կարծում էին, թէ Էրզրումի յանձնումը հոգեբանական ահագին հարուած կը լինի հայ ժողովրդի ու հայկական բանակի համար:

Թիֆլիսից Դրոն անցաւ Երեւան, ուր այդ օրերին կազմակերպւում էր Հայկական Կորպուսի մէկ դիվիզիան, որի հրամանատար նշանակուած էր զօր. Սիլիկեանը: Վերջինիս օգնական և բրիգադայի հրամանատար էր զօր. Դանիէլ բէգ Փիրումեանը: Երեւանի նահանգում էին գտնւում և Պարսկաստանից քաշուած 4րդ գունդը հրամանատարութեամբ գնդ. Յովսէփեանի (Էջմիածնում), 6րդ գունդը՝ հրամ. գնդ. Մելիք–Մուրադեանի (Աշտարակ), 3րդ գունդը՝ հրամանատարութեամբ գնդ. Յովսէփեանի (Եղբայրը) Դիլիջանում էր: Այս վերջինս յետոյ փոխադրուեց Թիֆլիս: Գնդերում իշխում էին զինուորական կոմիտէները. բոլշեւիկեան ոգին տիրող էր և նրանց մէջ: Ամէն օր պահանջներ էին ներկայացնում:

Թէ զօրամասերի մէջ տիրող անիշխանական տրամադրութեան վերջ տալու և թէ նահանգում ծայր տուած անկարգութիւնները զսպելու նպատակով Արամն ու Դրոն անհրաժեշտ գտան ստեղծել առողջ զինուորական մի կորիզ, որի վրա յենուած կարողանային մաքրագործման ու խաղաղութեան գործը դնել իրական հիմքերի վրա: Այդ նպատակով Դրօին յանձնարարուեց կազմել մի հետեւակ բրիգադ և մի ձիաւոր դիվիզիօն: Դրոն խոկոյն գործի կանչեց հմուտ խմբապետներ Բաշ Գառնեցի Մարտիրոսին, Խոսրով Եղիազարեանին և յանձնարարեց նրանց՝ ստանձնելով ռուսների թողած 800 ձիերը՝ ձեռնարկել կամաւորների հաւաքման: Երկու օրւայ ընթացքում հաւաքուեցին աւելի քան 200 զինուորներ, մեծ մասամբ կամաւորական 2րդ գնդի նախկին մարտիկներից: Միաժամանակ կոչ ուղղուեց սուրմալուեցիներին, և ահա դէպի Երեւան շարժուեցին զինուորներ ու սպաներ՝ սպայ Սահակեանի ու սպայ Շաքարշեանի ղեկավարութեան տակ: Մի շաբաթւայ մէջ կազմուեց 6 վաշտ հետեւակ՝ պարտիզանական գնդի, իւրաքանչիւր վաշտը 200 սուին, և երկու ձիաւոր հարիւրեակ՝ Խոսրովի ու Մարտիրոսի, որոնցից առաջինը ուղարկուեց